

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մարտի 2012 թվականի N 261 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ և ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ՍԵՅՍՄԻԿ ՌԻՍԿԻ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1760-Ն որոշման հավելվածի 11-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության մարզպետներին և առաջարկել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին՝ Հայաստանի Հանրապետության մարզերի և բնակավայրերի (համայնքների) զարգացման ծրագրերում՝ սահմանված կարգով ներառել սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ:

2. Սահմանել, որ՝

1) սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումները Հայաստանի Հանրապետության մարզերի և համայնքների զարգացման ծրագրերում ներառելու համար՝ Հայաստանի Հանրապետության մարզպետների և Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների կողմից Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացված հայտերի հիման վրա կատարվում են սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքներ, որոնց արդյունքում կազմվում է սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ.

2) սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի առդիր ամփոփագրում ներկայացվում են տարածքների խոցելիության նվազեցման վերաբերյալ առաջարկություններ՝ վերակառուցվող թաղամասերի կամ առանձին շենքերի ու շինությունների կառուցապատման և ճարտարապետաշինարարական այլ նախագծերի մշակման, ինչպես նաև բնակարանային ֆոնդի, հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների սեյսմակայունության ապահովման նպատակով.

3) սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզը Հայաստանի Հանրապետության մարզերի և համայնքների զարգացման ծրագրերում ներառելու համար Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն» գործակալությունում մշակվում է սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի կազմման տեխնիկական առաջադրանք և ներկայացվում համապատասխան տարածքային պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ ի կատարումն:

4) սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումները Հայաստանի Հանրապետության մարզերի և համայնքների զարգացման ծրագրերում ներառելու համար, տարածքների խոցելիության նվազեցման վերաբերյալ առաջարկությունների հիման վրա, մարզերի և բնակավայրի զարգացման ծրագրի նախագծում ընդգրկվում են կարճաժամկետ, միջնաժամկետ ու հեռանկարային ծրագրեր և ներկայացվում լիազորված մարմին՝ համաձայնեցման:

3. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին՝ սահմանել հսկողություն Հայաստանի Հանրապետության մարզերի զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների նախատեսման նկատմամբ:

4. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին՝ ապահովել տարածքների խոցելիության նվազեցման վերաբերյալ առաջարկությունները Հայաստանի Հանրապետության մարզպետներին և համայնքների ղեկավարներին ներկայացնելը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. մարտի 13

Երևան